«ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ»-Ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

Ապրիլի 21—23-ը Գիտությունների Ազգային Ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Հայոց Մեծ եղեռնի ութսունամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման պետական հանձնաժողովի և Զորյան ինստիտուտի համատեղ կազմակերպած «Ցեղասպանության հարցեր» երրորդ գիտաժողովը, որին մասնակցում էին գիտնականներ 16 երկրներից: Բացման իր խոսքում Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը ասաց, թե «ցեղասպանությունը զուտ քաղաքական ծրագիր էր՝ թելադրված Օսմանյան կայսրության կոնկրետ պետական շահերից», և համակողմանի վերլուծությամբ ներկայացրեց այն գործոնները, որոնք հանգեցրին այդ ծրագրի հղացմանը և իրագործմանը:

Այս գիտաժողովում ոչ միայն ոգեկոչվեց հիշատակը մեր սուրբ նահատակների և մեկ անգամ ևս վերահիմնատավորվեց մեր ազգային ցավը, այլև հայոց ցեղասպանությունը քննվեց արդի աշխարհում տեղի ունեցող պատերազմների և քաղաքական հակամարտությունների ընդհանուր համատեքստում: Զուգադրական-համեմատական եղանակով ցույց տրվեցին այն ընդհանրությունները, որոնք կան 20-րդ դարում տեղի ունեցած ցեղասպանությունների միջև: Գիտաժողովը կարևորեց պարզելը քաղաքական, սոցիալ-տնտեսական, բարոյա-հոգեբանական և ազգային-ռասսայական այն գործոնների, որոնք հանգեցնում են ցեղասպանության, և շեշտվեց, որ նման քննության հիման վրա կատարված եզրահանգումները, ունենալով գիտական մեծ կարևորություն, միաժամանակ կնպաստեն մարդկության դեմ գործվելիք նոր ոճիրների կանխմանը:

Գիտաժողովի մասնակիցներին օրհնության իր խոսքը բերեց և ելույթ ունեցավ նաև Վեհափառ Հայրապետը:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ «ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ»-Ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎՈՒՄ

(Ապրիլ 21—23, 1995, Երևան)

Յանուն Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ և Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռի՝ Ս. Էջմիածնի՝ հայրական ջերմ սիրով և խոր գնահատանքի զգացումով կ'ողջունենք Ձեզ՝ Վսեմաշուք Նախագահ Հայաստանի Հանրապետութեան, յարգարժան անդամներ Հայոց ցեղասպանութեան 80-ամեակին նուիրուած Միջոցառումների Կազմակերպման պետական Յանձնաժողովի և Հայագիտական Հետազօտութիւնների ու Վաւերագրման Զօրեան Ինստիտուտի, և սիրելի գիտնականներ և գիտնականուհիներ, երբ այսպէս համախմբուած էք մեր վերանկախացեալ հայրենիքի մայրաքաղաք Երևանի մէջ և առարկայական քննարկման ու խորհրդածութեան առարկայ կը դարձնէք մեր արդի պատմութեան ամենէն ծանրակշիռ դէպքերէն մէկը՝ Համաշխարհային Առաջին պատերազմին, յատկապէս 1915 թուականին հայութեան դէմ գործուած ցեղասպանութիւնը:

Մենք կը գնահատենք նաև կազմակերպիչ Յանձնախումբին այն մօտեցումը, որով անոնք հայութեան դէմ Երիտթուրքերի կողմէ գործադրուած ցեղասպանական արարքը այս գիտաժողովին մէջ կը դիտեն առհասարակ ցեղասպանութեան ընդհանուր երևոյթի շրջագծին մէջ ներառնելով նաև ուրիշ ազգերու դէմ գործուած նման արարքներ: Այս ըմբռնումով՝ գիտաժողովը կը զգենու իսկապէս միջազգային նկարագիր, տարողութիւն և արժէք:

Մեզի համար անձնապէս նշանակալից կը նկատենք այն իրողութիւնը որ իբրև նորընտիր Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ս. Էջմիածնի Մայր տաճարէն դուրս Մեր առաջին հրապարակային ելոյթը կ'ունենանք ա՛յս առիթով, ինչ որ գոհունակութեան բացառիկ առիթ մըն է Մեզ համար, որովհետև Մենք այս գիտաժողովին մէջ կը տեսնենք նահատակներու ոգիին և կտակին հանդէպ հաւատարմութեան վերաբերում և մեր պատմութիւնը ճշմարտօրէն ըմբռնելու նախանձախնդրութիւն:

Դուք գիտնականներ էք, ցեղասպանութեան երևոյթին քննարկման նուիրուած մասնագէտներ, ձեր առաքելութիւնն է ի յայտ բերել և առարկայական ճշգրիտ ու տոկուն տուեալներով լուսարձակի տակ դնել հայոց դէմ գործուած ցեղասպանութեան պատմական իրողութեան այլազան երեսները և լուսաբանել անոնց ընկերացող ընկերաբանական, իրաւաբանական և լայն իմաստով՝ քաղաքական ու գաղափարաբանական հանգամանքներն ու հարցերը: Ձեր կոչումն ու նպատակն է որոնել և ի լոյս բերել **ճշմարտութիւնը:**

Որպէս Եկեղեցի՝ Մենք կ'ողջունենք ձեր աշխատանքը, որովհետև էապէս և խորապէս ճշմարտութեան նախանձախնդիր քարոզողն ու մեծագոյն ջատագովն է եղած Եկեղեցւոյ հիմնադիրը՝ Ինք Քրիստոս: Յովհաննու Աւետարանին մէջ կը կարդանք Իր խօսքերը.— **«Եւ ծանիջիք զճշմարտութիւնն, և ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ»** (Յովհ. Ը: 32): Այո՛, ճըշմարտութեան ժխտումը կամ մերժումը ծանր բեռ է ոչ թէ միայն մերժուածին վրայ, այլ և մերժողին: Ճշմարտութիւնը կրնայ վարագուրուիլ, կրնայ խեղդուիլ, բայց ո՛չ խափանուիլ կամ կորսուիլ: Դուք գիտնականներդ ճըշ-

մարտութեան առաքեալներ եղէք, ինչպէս կ'ըսէ նոյն Առաքեալ-Աւետարանիչը. **«Գործակիցք լիցուք ճշմարտութեանն»** (Գ. Յովհ. 8):

Եկեղեցին յոյսին ջահն է, կեանքին օճախը, յարութեան կոչնակը: Ո՛չ մահուան ողբերգակը և ո՛չ ալ գերեզմանին պահակը: Ահա ութսուն տարիներ շարունակ, անխափան և աննահանջ հետևողականութեամբ Հայոց Եկեղեցին իր աղօթքներով, ոգեկոչական արարողութիւններով և իր քարոզութիւններով կենդանի պահեց ցեղասպանութեան զոհ գացած առաւել քան մէկ ու կէս միլիոն նահատակներու յիշատակն ու կտակը, միշտ վառ պահելով յոյսին լոյսը հայ ժողովուրդի հոգիին, կեանքին և տեսլականին մէջ: Միանգամայն ողջ քրիստոնեայ աշխարհին և մարդկային իրաւանց շրջագծին մէջ միջազգային, միջ-եկեղեցական կազմակերպութիւններու մօտ ան եղաւ յուշարարը և բանբերը ցեղասպանութեան ճանաչումին:

Կը յիշեմ, երէկուան պէս, երբ ճիշտ քսան տարիներ առաջ (1975) և ճիշտ այս օրը (24 Ապրիլ), մեր Եկեղեցին Նիւ Եորքին մէջ նշեց հայկական ցեղասպանութեան 60-ամեակը, Ապրիլեան Մեծ եղեռնի վկաներէն դեսպան Հէնրի Մորկնթոյի (Henri Morgenthau) թոռնուհին՝ հոչակաւոր պատմաբան Պարպարա Թաքման (Barbara Tuchman) կանգնեցաւ վեց հազար վերապրող հայերու դիմաց Մէտիսընն Սքուէր Կարտընի սրահին մէջ և ըսաւ. **«Փարիզի խաղաղութեան Համաժողովին ձեր ներկայացուցիչը բանաստեղծ Աւետիս Ահարոնեան ըսաւ թէ նահատակներու մարմինները՝ «հողին ընդերքէն կ'աղաղակեն», տենչալով ապահովութիւնը անկախ օճախի մը: Իրենք (նահատակները) զայն չտեսան. միայն գիտցան որ ան կ'ապրի ձեր մէջ և ձեր ինքնութեան հայկականութեան պահպանումին մէջ, որ ինքզինք ամուր պէտք է պահէ որպէսզի պատրաստ ըլլաք պատմութեան բախտորոշ մէկ դարձուածքին»:**

Եթէ ինք՝ Պարպարա Թաքման այսօր ողջ ըլար՝ պիտի զգար որ ոչ միայն **պատմաբան** մըն էր ինք, այլ նաև **մարգարէ** մը, որովհետև ահա եկաւ այդ բախտորոշ դարձուածքը և հայ ժողովուրդը արթուն, պատրաստ և արի գտնուեցաւ վերստեղծելու իր անկախութիւնը, իր ինքնուրոյն և գերիշխան պետականութեամբ:

Եւ ի՜նչ արտապնդիչ երևոյթ որ ահա այդ անկախ պետականութեամբ ապրող մեր հայրենիքին մէջ է, մեր Հանրապետութեան Նախագահի հովանիին ներքև և պետական աւագանիին ներկայութեան, որ տեղի կ'ունենայ իր տեսակին մէջ եզակի այս գիտաժողովը:

Մեր Սուրբ Եկեղեցին կ'ողջունէ զայն և կը յուսայ որ ճշմարտութեան լուսաբանումով դուք նպաստած կ'ըլլաք արդարութեան և խաղաղութեան նուիրական դատին և մեծ ծառայութիւն մատուցած՝ մեր հայ ժողովրդին:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ